1. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐ

1.1. ԱՎՍՏՐԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ՄԱՐԻԱՄ ՊՈՂՈՍՅԱՆ
02.08.2021-10.09.2021

Ներածություն: Ավստրիան՝ Ավստրիայի Հանրապետությունը, երկիր է Կենտրոնական Եվրոպայում և սահմանակից է մի կողմից բարձր զարգացած Շվեյցարիային, Գերմանիային և Իտալիային, մյուս կողմից՝ Չեխիային, Հունգարիային, Սլովակիային և Սլովենիային:

Ավստրիայի տարածքը 83 879 կմ^2 է, որտեղ, ըստ ՄԱԿ-ի տվյալների, 2021 թ. հուլիսի 1-ի դրությամբ բնակվում է 9 043 070 մարդ[1]: Խորհրդարանական հանրապետություն է, պետական լեզուն գերմաներենն է, մայրաքաղաքը՝ Վիեննան:

Ավստրիան, ինչպես և Հայաստանը, հիմնականում լեռնային երկիր է, տարածքի մեծ մասը՝ գրեթե 70 %-ը, կազմում են բարձրադիր լեռները: Երկրի մշակվող հողատարածքները ընդհանուր տարածքի մոտ 50 %-ն են կազմում[2]: Հայաստանի նման՝ Ավստրիան ևս ուղիղ ելք չունի դեպի ծով: Բայց այս փաստը չի խոչընդոտել և ներկայումս էլ չի խոչընդոտում երկրի զարգացմանը:

Համաձայն Ավստրիայի վիճակագրական ծառայության՝ 2020 թ. երկրի ՀՆԱ-ն կազմել է 377.3 մլրդ եվրո և ի տարբերություն 2019 թ.՝ տնտեսական աճի ցուցանիշը բացասական էր՝ ռեկորդային -5.1 %, որը պայմանավորված է համավարակով: Նմանատիպ անկում չէր արձանագրվել 1996 թվականից սկսած, անգամ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում՝ 2009 թ., կազմել է -1.9 %[3]: 1995 թվականից մինչ օրս Ավստրիայում 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կրկնապատկվել է՝ 1995-ին կազմելով 22 220 եվրո, 2019-ին՝ 44 780 եվրո, 2020-ին համավարակի արդյունքում նվազել է՝ 42 300 եվրո[4]:

Ավստրիան Եվրոպայի ամենազարգացած երկրներից է, տարանցիկ երկիր է էներգակիրների դեպի Եվրոպա մատակարարումների համար: Արդյունաբերության կարևորագույն ճյուղերից են սննդի, շքեղ ապրանքների, մեքենաշինության և պողպատե կոնստրուկցիաների, քիմիական և տրանսպորտային միջոցների արտադրությունը: Միտում կա անցման դեպի օրգանական

---

[1] https://worldpopulationreview.com/countries/austria-population (last accessed 15.07.21)

[2] https://www.austria.org/overview

[3] Ավստրիայի վիճակագրական ծառայություն՝ https://www.statistik.at/web_en/statistics/Economy/national_accounts/gross_domestic_product/annual_data/index.html , (last accessed 10.08.21)

[4] Տե՛ս նույն տեղում:

գյուղատնտեսության: Ավստրիայում օրգանական տնտեսությունների մասնաբաժինը 22 % է, որով ԵՄ անդամ պետությունների շարքում առաջատարներից է: Արդյունաբերությունն ընդգրկում է արտադրության բոլոր ճյուղերը՝ սկսած բազային ապրանքներից մինչև վերամշակման բարձր աստիճան ունեցող աշխատատար ապրանքների արտադրությունը և բնութագրվում է հիմնականում միջին չափի ձեռնարկությունների մեծ քանակով[1]:

Հոդվածի արդիականությունը: Նախորդ դարի 2 համաշխարհային պատերազմներից, մասնավորապես՝ Երկրորդ համաշխարհայինի ավարտից հետո ավերված և օկուպացված Ավստրիան ներկայումս աշխարհի ամենահարուստ երկրներից մեկն է: Զուգահեռներ անցկացնելով ներկայիս Հայաստանի հետ, որը ևս գտնվում է ոչ միայն հետպատերազմյան, այլև համավարակային շրջանում, արդիական է դառնում նմանատիպ ճգնաժամերից դուրս եկած և հզորացած պետությունների փորձի ուսումնասիրությունը:

Ուստի ***հոդվածի նպատակն է՝*** Ավստրիան որպես էտալոն դիտարկելով՝ առաջարկել Հայաստանի համար ճգնաժամից դուրս գալու ուղիներ և լուծումներ:

Այդ նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ ***խնդիրները՝***

- ուսումնասիրել Ավստրիայի տնտեսական զարգացմանը ուղին,
- բացահայտել կիրառված և ներկայումս էլ կիրառվող մեթոդները,
- վերլուծել Ավստրիայի և Հայաստանի դիրքերը ըստ մի շարք համաշխարհային ցուցանիշների:

Թեմայի ուսումնասիրվածությունը: Հայաստանում այս կտրվածքով առանձին երկրների փորձի ուսումնասիրություն չի կատարվել, Ավստրիայի տնտեսական զարգացումը ուսումնասիրվել է մի շարք արտասահմանյան հեղինակների կողմից գիտական հոդվածների, ատենախոսությունների շրջանակներում:

Գրականության վերլուծություն: 1945 թ. մայիսի 8-ին զինված հակամարտությունը դադարեց, և Ավստրիան բաժանվեց չորս գրավյալ գոտիների՝ խորհրդային, ամերիկյան, բրիտանական և ֆրանսիական: Այդ գոտիները առանձնացված մնացին մինչև 1945 թ. աշունը, իսկ խորհրդային գոտին՝ Ավստրիայի արևելյան հատվածը, մինչև 1953 թ.: 1946 թ. Վիեննա կատարած տեսչական այցի ժամանակ ամերիկացի դիվանագետ և Պետդեպարտամենտի փորձագետ Չարլզ Քինդլբերգերը առանձնացման վերջնական հետևանքները նկարագրել էր հետևյալ կերպ. «Չորս տերությունների կողմից ավստրիական օկուպացիան մեծ սխալ էր: Եվ նորից ԱՄՆ-ն հում գործարք ստացավ: Ռուսները ստացան հացով զամբյուղը, անգլիացիները՝ ածուխը, ֆրանսիացիները ստացան տեսարժան վայրերն իրենց ողջ զբոսաշրջային ներուժով,

[1] https://www.austria.org/economy (last accessed 16.07.21)

իսկ ամերիկացիները՝ բացարձակապես ոչինչ»[1]:

Ավստրիայի զարգացման և ամենահարուստ պետություններից մեկը դառնալու գործում մեծ նշանակություն են ունեցել Մարշալի[2] պլանով կատարված հատկացումները: Մարշալի պլանը էականորեն արագացրեց Ավստրիայի տնտեսական վերականգնումը և քաղաքական ու մշակութային կողմնորոշումը դեպի արևմտյան աշխարհ:

Պրոֆեսոր Գյունտեր Բիշոֆը և ուրիշներ «Մարշալի պլանը Ավստրիայում» ժողովածուում նշում են, որ առանց Մարշալի պլանով ստացած աջակցության Ավստրիայի ֆիզիկական և բարոյական վերականգնումը շատ երկար կտևեր[3]:

1960-ականների ավստրիական այսպես կոչված «տնտեսական հրաշքը» հիմնականում հիմնված էր վերակառուցման սերնդի ծանր աշխատանքի վրա, դրա ծագումը խթանվեց և արագացվեց Ամերիկյան հետպատերազմյան աջակցության ծրագրերով: Մարշալի պլանով առաջին տարում Ավստրիային արված ուղղակի աջակցությունը կազմում էր 217 մլն դոլար: Բացի այդ, Ավստրիան 63,5 մլն դոլարի չափով «անուղղակի» օգնություն ստացավ նաև մասնակից եվրոպական երկրների միջև առևտրի համար «փոխառության իրավունքների» տեսքով:

Ավստրիական Տնտեսական հետազոտության ինստիտուտի տնօրենը 1955թ. իր ելույթում նշում էր, որ «Առանց շռայլ արտաքին օգնության Ավստրիան անորոշ ժամանակով ընկղմված կլիներ այնպիսի տառապանքների մեջ, որ դանդաղ վերականգնումը հնարավոր կլիներ միայն ամենամեծ ծախսերով և ամենադժվար պայմաններում»: 1962-1998 թթ. ընթացքում ԵՎԾ հիմնադրամը ավստրիական ձեռնարկություններին ընդհանուր առմամբ տրամադրել է 90 մլրդ ավստրիական շիլինգի չափով ցածր տոկոսներով երկարաժամկետ փոխառություններ[4]: Ավստրիական տնտեսության վրա էական ազդեցություն ունեցավ նաև անդամակցությունը Եվրամիությանը (1995 թվական)[5]:

Մարշալի պլանով ստացված գումարը Ավստրիան հիմնականում ուղղում էր արդյունաբերության պետական ճյուղեր, որոնցով ապահովվում

---

[1] The Marshall Plan, New Austrian Information, Vol. 58, March-April 2005. Available at: https://www.austrianinformation.org/march-april-2005/2007/2/14/915243.html (Last accessed 12.08.2020)

[2] Եվրոպական վերականգման ծրագիրը, որ նաև կոչվում է Մարշալի պլան (ներկայացվել է ԱՄՆ պետքարտուղար Մարշալի կողմից), բազմիցս բարձր գնահատականների է արժանացել՝ որպես ԱՄՆ արտաքին քաղաքականության ամենահաջողված նախագիծ և պատմության մեջ վերակառուցման ամենաարդյունավետ ծրագիր:

[3] Pelinka, A., Stiefel, D., & Bischof, G. (Eds.). (2000). The Marshall Plan in Austria: Vol 8 (1st ed.). Routledge. pp.1-2. https://doi.org/10.4324/9781351303521

[4] https://www.austrianinformation.org/march-april-2005/2007/2/14/915243.html

[5] The Economy Since 1950, ADVANTAGE AUSTRIA Copenhagen, available at: https://www.advantageaustria.org/dk/zentral/business-guide/zahlen-und-fakten/wirtschaft/wirtschaft-seit-1950/wirtschaft-seit-1950.en.html (last accessed: August 18, 2021)

էր բնակչության զբաղվածությունը: Զբաղվածության ապահովումը շատ կարևոր նշանակություն ուներ երկրի համար: Կանցլեր Բ. Կրեսիկին (1970-1983 թթ.) մի առիթով նշել է, որ «հարյուր հազարավոր գործազուրկներն ավելի կարևոր են, քան մի քանի միլիարդ շիլինգ պարտքը»: Նրա կառավարման ընթացքում են մշակվել ներկայիս Ավստրիայի հիմք հանդիսացող օրենքներն ու քաղաքականությունները, նա ձգտում էր ամրապնդել սոցիալական համերաշխության զգացումը և ապահովել լիարժեք զբաղվածություն երկրում: Այն պետության առաջնահերթություններից է, 2009 թ. Ավստրիայի զբաղվածության ծառայության ղեկավար Յ. Կոֆը նշում էր. «ավելի լավ է ունենալ 3-ական ամսով գործազուրկ մնացող 4 մարդ, քան 1 մարդ, ով գործազուրկ կլինի ամբողջ տարով»:[1]

Պրոֆեսոր Ֆրանց Մարհոլդը և այլք իրենց «Ինչպե՞ս Ավստրիան հաղթահարեց տնտեսական ճգնաժամը» զեկույցում նշում են, որ ֆինանսատնտեսական ճգնաժամի հաղթահարման գործում էական նշանակություն ունեցավ Երկրորդ համաշխարհայինից հետո Ավստրիայում ներդրված սոցիալական գործընկերության համակարգը, որը նպաստեց գործատուների, աշխատակիցների և շահագրգիռ կողմերի միջև համագործակցության ապահովմանը[2]:

Պրոֆեսորներ Ք. Հերմանն ու Ջ. Ֆլեքերը ևս իրենց կողմից կատարված հետազոտությունում մեկ անգամ ևս փաստում են, որ Ավստրիան բավականին լավ և արագ դուրս եկավ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից՝ իրականացնելով մի շարք միջոցառումներ, որոնցից էին աշխատաշուկայի խթանման միջոցառումների 2 փաթեթները, որոնք նպաստելու էին պահանջարկի աճին և զբաղվածության պահպանմանը[3]:

Մեթոդաբանությունը: Վերլուծությունն իրականացվել է Ավստրիայի զարգացման խնդիրների լուծումների հիմնական գործոնների դիտարկմամբ, Հայաստանի հետ համեմատությամբ:

Ուսումնասիրության հիմնական արդյունքների վերաբերյալ եզրահանգումներ կատարելիս կիրառվել է տրամաբանական մտահանգման և համեմատական վերլուծության մեթոդները: Վերլուծության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել Ավստրիայի և Հայաստանի վիճակագրական կոմիտեի զեկույցները, մի շարք վերկայքեր, Համաշխարհային բանկի տվյալ-

---

[1] McNamee, Dardis, The Austrian Miracle: What's the secret of Austria's singular success, while the rest of Europe's economies founder? Foreign Policy. November 5. 2012. Available at: https://foreignpolicy.com/2012/11/05/the-austrian-miracle/ (last accessed: August 9, 2021)

[2] Marhold, F., Poier, K., Aschauer, P., Kohlbacher, E., Nebauer, M., & Wewerka, L. (2011). How has Austria overcome the economic crisis? International Society for Labour and Social Security Law. p.5. Available at: https://islssl.org/wp-content/uploads/2014/08/Austrian-National-Report.pdf (last accessed: August 18, 2021)

[3] Hermann, Christoph and Flecker, Jörg (2012). "The Austrian model and the financial and economic crisis", in S. Lehndorff (ed.) A triumph of failed ideas – European models of capitalism in the crisis. European Trade Union Institute, pp.132-33 (121-36). Available at: https://www.etui.org/sites/default/files/C6%2012%20A%20triumph%20of%20failed%20ideas%20WEB.pdf (last accessed: August 2, 2021)

ները, Համաշխարհային մրցունակության և Կայուն զարգացման զեկույցները:

Վերլուծություն: Ավստրիան համարվում է սոցիալական երկիր: Այստեղ առանցքային արժեքը մարդն է:

Պատահական չէ տնտեսագետներ Մարկուս Մարտերբաուերի և Զեպ Ցուկերստերի ելույթը, որում նշվում է. «Ավստրիայում համընդհանուր բարեկեցության ամենակարևոր գործոնը առատաձեռն պետության դերն է, որը «կայունացնում է սպառումը» անկումների ժամանակ: Վստահ լինելով, որ իրենց հիմնական կարիքները բավարարված են, ավստրիացիները շարունակում են ծախսել նաև իրենց խնայողությունները: Մշտական սպառողական պահանջարկը և խնայողությունների կրճատումը անկման ժամանակաշրջաններում, ինչպես նաև խնայողությունների ավելացումը բումի տարիներին բնորոշ են ավստրիական տնտեսությանը: Թե՛ մեկը, թե՛ մյուսը օգնում են պահպանել արտադրությունը և զբաղվածությունը բարձր մակարդակի վրա»[1]:

Ավստրիան ԵՄ-ի առավել զարգացած և կայուն պետություններից մեկն է: Ավստրիայում գործող կարևորագույն համակարգերից մեկը սոցիալական գործընկերության համակարգն է, որը շատ կարևոր դեր ունի զբաղվածության պահպանման գործում: Այն իրականացվում է աշխատանքի, արդյունաբերության, կառավարության և հաճախ գիտական շրջանակների ներկայացուցիչների միջև զբաղվածության երաշխիքների, աշխատավարձի, կենսաթոշակների, գործազրկության ապահովագրության և աշխատավայրի այլ ստանդարտների, ինչպես նաև համապատասխան իրավական և քաղաքական հարցերի քննարկումների միջոցով, ինչը հանգեցնում է առաջարկությունների մշակման:

Արդյունավետ տնտեսական և զբաղվածության քաղաքականությունների իրականացումը նպաստեց, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի փուլում Ավստրիայի վիճակը շատ ավելի լավ լինի, քան մյուս զարգացած պետություններինը[2]: Մասնավորապես՝ 2008 թ. ֆինանսական ճգնաժամի սկզբից Ավստրիան հսկում էր գործազրկությունը մի շարք նախաձեռնությունների միջոցով, ներառյալ աշխատաժամանակի կրճատումը, կրթության և մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացումը, եկամտահարկի նվազեցումը և հասարակական տրանսպորտի ծախսերի կրճատումը, որոնք միավորվեցին աշխատատեղերի պահպանման, հմտությունների զարգացման և սպառողական ծախսերի ազատման հետ: Ճգնաժամի պիկի ընթացքում՝ 2009-ին, գրեթե 66 000 աշխատակից

---

[1] McNamee, Dardis. The Austrian Miracle: What's the secret of Austria's singular success, while the rest of Europe's economies founder? Foreign Policy. November 5. 2012. Available at: https://foreignpolicy.com/2012/11/05/the-austrian-miracle/ (last accessed: August 9, 2021)

[2] Gligorov, Vladimir. (2013). Austria: Not Exactly a Miracle, Aspen Review: Central Europe, Issue 01/2013, https://www.aspen.review/article/2017/austria%3A-not-exactly-a-miracle/ (last accessed: August 3, 2021)

անցավ կրճատված աշխատաժամանակի, հատկապես մեքենաշինությունում: Ավստրիան նաև զգալի միջոցներ է ներդրել ինչպես գործազուրկների, այնպես էլ աշխատաշուկա մտնող երիտասարդների մասնագիտական պատրաստման համար: [1]

Կրթությունը և զբաղվածության ապահովումը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն հիմնաքարերն են: Ավստրիայում թե՛ միջնակարգ, թե՛ մասնագիտական, թե՛ բարձրագույն կրթությունը անվճար է: Երկրի տնտեսությունը բնութագրվում է լավ կրթված աշխատուժով և սոցիալական գործընկերության համակարգի շրջանակներում ղեկավարության և աշխատողների միջև կայուն հարաբերություններով, ինչը թույլ է տալիս իրականացնել երկարաժամկետ պլանավորում:

Ավստրիայում աշխատանքային հարաբերությունները հիմնականում կարգավորվում են միասնական բանակցությունների համակարգով: Դրանք ոլորտային բնույթ են կրում, նպատակաուղղված են ապահովելու նվազագույն աշխատավարձի չափ և աշխատանքային շատ պայմաններ: Կնքվում են ժամկետով:

Միջազգային համեմատություններով միասնական բանակցությունների ավստրիական համակարգը բավականին կայուն է, բայց մեծապես կախված է ինստիտուցիոնալ պահանջներից և սոցիալ-մշակութային հիմքերից: Համակարգն աչքի է ընկնում բանակցությունների մասնակիցների չափազանց բարձր և կայուն ընդգրկմամբ. աշխատողների շուրջ 98 %-ը ներառված է այդ համաձայնագրերում: Դա պայմանավորված է ընկերությունների պարտադիր անդամակցությամբ գործատուների ազգային ասոցիացիային՝ Ավստրիայի տնտեսական պալատին (WKO, Wirtschaftskammer): Միասնական պայմանագրեր կնքելու իրավունքը կարգավորվում է 1974 թվականի աշխատանքային սահմանադրական ակտով:[2]

Համաձայն աշխատանքային հարաբերությունների մասին օրենքի՝ գործատուների և աշխատողների խմբերի օրինական շահերը ներկայացնող խմբերն իրավունք ունեն կնքել միասնական համաձայնագրեր, եթե նրանք անկախ են իրենց բանակցային գործընկերներից և պատասխանատվություն են կրում աշխատանքի պայմանների կարգավորման համար:

Միասնական համաձայնագրեր կնքելու իրավունք ունեցող կանոնադրական խմբերին են պատկանում՝

- Աշխատանքի պալատը (աշխատողների ներկայացուցիչներ),
- Ավստրիայի տնտեսական պալատը (գործատուների ներկայացուցիչներ),

---

[1] Տե՛ս N 12:

[2] Glassner, Vera and Hofmann, Julia (2019). Chapter 2. Austria: from gradual change to an unknown future, in Müller, T.; Vandaele, K., and Waddington, J. (eds.) Collective bargaining in Europe: towards an endgame, Volume II, European Trade Union Institute, pp. 33-35 (33-54), available at: https://www.etui.org/sites/default/files/CB1-Chapitre%2B2.pdf (last accessed: August 10, 2021)

- ազատ մասնագիտությունների պալատները (օրինակ՝ բժիշկներ, իրավաբաններ):

Միասնական պայմանագրեր կնքելու ունակությունը կարող է սահմանվել նաև օրենսդրությամբ (օրինակ՝ Bundesrechenzentrum GmbH – Դաշնային հաշվողական կենտրոն)[1]:

Որպես օրինակ դիտարկենք տվյալների մշակման և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ծառայություն մատուցողների աշխատակիցների համար նախատեսված միասնական համաձայնագիրը.

1. այն կնքվել է մի կողմից Կառավարման խորհրդատվական մասնագիտական ասոցիացիայի, Ավստրիական տնտեսական պալատի հաշվապահական հաշվառման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի և մյուս կողմից՝ Ավստրիական արհմիությունների ֆեդերացիայի, Մասնավոր հատվածի աշխատողների միավորման (մասնավորապես՝ գրաֆիկական աշխատողների և լրագրողների, էլեկտրատեխնիկա և էլեկտրոնային արդյունաբերություն, հեռահաղորդակցություն և SS) միջև:

2. Այն կարգավորում է գործունեության տարածքը, ուղղվածությունը, ժամային գրաֆիկը:

3. Ըստ դրա սահմանվում է նվազագույն աշխատավարձը ըստ մասնագիտական փորձի. ցածր մակարդակը՝ 1590 եվրո, բարձր մակարդակի նվազագույն աշխատավարձը՝ 5276 եվրո: Շաբաթական նորմալ աշխատաժամանակը՝ 38.5 ժամ, որը պետք է բաժանվի առավելագույնը 5 օրերի միջև:

4. Այս համաձայնագրով սահմանվում է նաև աշխատակցի կողմից աշկերտության շրջանում ստանալիք աշխատավարձի չափը առաջին տարում՝ 670 եվրո, որը ավելանալու է հաջորդող 3 տարիների ընթացքում:

5. Այն սահմանում է նաև յուրաքանչյուր մասնագիտական մակարդակի աշխատանքային պարտականությունները, հավելյալ աշխատաժամանակը, արձակուրդները[2]:

Թերևս վերոնշյալ գործողությունների շնորհիվ է, որ Համաշխարհային մրցունակության զեկույցի 2018 թ. տվյալներով Ավստրիան առաջատարն է աշխատողների իրավունքների ենթացուցիչով[3]: 2021 թ. ապրիլի տվյալներով Ավստրիայում գործազրկության մակարդակը բավականին ցածր է՝ ի տարբերություն եվրոպական մյուս երկրների՝ 5,6 %: Համավարակով պայմանավորված այս ցուցանիշն ավելի բարձր է, քան համաշխարհային ֆինանսատնտե-

---

[1] Federal Ministry, Republic of Austria, Labor. Collective Agreements, Available at: https://www.bma.gv.at/en/Topics/Labour-Law/Salary,-Wages-and-Pay/Collective-Agreements.html (last updated: November 8, 2019)

[2] Աղբյուրը՝ 2020-ին կնքված Միասնական համաձայնագիր՝ https://www.wko.at/service/kollektivvertrag/information-technology-collective-agreement-2020.pdf

[3] World Economic Forum, Klaus Schwab, Global Competitiveness report 2018, (published October 16, 2018), p. 81, available at http://www3.weforum.org/docs/GCR2018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2018.pdf

սական ճգնաժամի տարիներին էր, անգամ 20-րդ դարի 2-րդ կեսին՝ 1969-ին, ցածր է եղել՝ 2,8 %[1]:

Բայց բնական է, որ երկրի զարգացման գործում ոչ միայն լավ մշակված քաղաքականություններն էական նշանակություն ունեն, այլև մարդիկ՝ ժամանակի պահանջներին համապատասխանող, լավ կրթված և որակավորված աշխատակիցները: Նման աշխատուժ ունենալու գործում հատկապես էական է նաև Ավստրիայում կիրառվող մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) համակարգը: Այդ համակարգը հնարավորություն է տալիս ձեռք բերել աշխատաշուկայում անհրաժեշտ հմտություններ, որը վճռորոշ է երիտասարդների տնտեսական հնարավորությունների և աշխատատեղերի ապահովման համար: Այս համակարգի իրականացումը ապահովում է աշխատաշուկայի անխափան աշխատանքը և օգնում է իրականացնելու ապագա հնարավորությունները: Մասնագիտական կրթության և ուսուցման դպրոցներն ու քոլեջները անցկացնում են աշխատանքային տարբեր հաստիքներին համապատասխան դասընթացներ: Այս դասընթացներն էլ որակյալ աշխատող դառնալու և աշխատաշուկայում մրցունակ լինելու գրավականն են:

Կրթություն-աշխատանք կապն ապահովող ևս մի կարևոր ծրագիր է աշկերտության համակարգը՝ աշխատանքի վրա հիմնված ուսումնառությունը: Այս համակարգի առավելությունն այն է, որ աշխատակիցը համատեղում է ուսուցումը (գործնական ուսուցում/ուսուցում առանց աշխատանքից հրաժարվելու, ընդհանուր ժամանակի 80 %-ը) սովորելու ժամանակահատվածներով (20 %), որի ընթացքում ձեռք են բերվում տվյալ մասնագիտության կամ ոլորտի վերաբերյալ հիմնական հմտություններն ու գիտելիքները: Արդյունքում աշխատակիցը ներառված է լինում արտադրության կամ ծառայությունների մատուցման գործընթացում և ձեռք է բերում անհրաժեշտ հմտություններ իրական պայմաններում: Համակարգը բաց է բոլոր այն երիտասարդների համար, ովքեր ավարտել են իննամյա պարտադիր դպրոցական կրթությունը: Ավստրիայում միջնակարգ դպրոցի աշակերտների 68 %-ը ընտրել է ՄԿՈՒ ծրագրերով շարունակել կրթությունը, այս ցուցանիշը ավելի բարձր է, քան ՏՀԶԿ երկրների միջինը՝ 42 %: Ավստրիայում ամենատարածված ոլորտներն են՝ ինժիներիան, արտադրությունը և շինարարությունը, որտեղ միջին մասնագիտական կրթության բարձր դասարանների շրջանավարտների 35 %-ը որակավորում է ստանում այս ոլորտում: Արդյունքում բարձրագույն մասնագիտական կրթության ծրագրերով սովորող երիտասարդների շրջանում զբաղվածության մակարդակը ավելի բարձր է, քան բարձրագույն կրթություն ունեցող մեծահասակների շրջանում[2]:

---

[1] https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.NE.ZS?locations=AT

[2] Education at a Glance 2020: OECD Country Note
https://www.oecd.org/berlin/publikationen/EAG2020_CN_AUT.pdf

Քանի որ աշխատաշուկայի պահանջները շատ արագ են փոփոխվում, ավելի ճկուն աշկերտության համակարգ ունենալը էական նշանակություն ունի: Ավստրիայի թվային և տնտեսական հարցերի նախարարությունն էլ պարբերաբար կազմում է ժամանակակից աշխատանքային պրոֆիլներին համապատասխան ծրագրերը: Դա իրականացվում է մասնագիտական պահանջարկի գնահատմամբ: Մասնագիտական պահանջարկի գնահատումը կատարվում է Ավստրիական պետական զբաղվածության ծառայության կողմից, կոչվում է AMS հմտությունների բարոմետր: Այդ բարոմետրով գնահատումն իրականացվում է տարեկան 2 անգամ, որի շրջանակներում տեղեկատվություն է տրամադրվում աշխատաշուկայի ընդհանուր միտումների, մասնագիտական հմտությունների առաջարկի և պահանջարկի մասով: Գնահատման համար հիմք են վերցվում նախորդ 2 տարիների աշխատանքի հայտարարությունները, հարցումներ են իրականացվում հասարակության տարբեր շերտերի՝ աշխատողների, գործատուների, քաղաքականության մասով որոշում կայացնողների շրջանում[1]:

Աշկերտության ծրագիր 2019 թվականից ներդրվում է նաև Հայաստանում: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը Եվրոպական կրթական հիմնադրամի աջակցությամբ, համագործակցելով այլ շահագրգիռ գործընկերների հետ, մշակել է «Հայաստանի ԱՀՈՒ (աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն) զարգացման հայեցակարգ և 2019-2025 թթ. ճանապարհային քարտեզ»: Այս փաստաթուղթը արժանացել է ՄԿՈՒ զարգացման ազգային խորհրդի հավանությանը 2019 թ. հունիսին[2]: Երիտասարդության շրջանում գործազրկությունը դեռևս բարձր է մնում Հայաստանում: Աշխատաշուկայում իրավիճակի վերաբերյալ զեկույցը նշում է 33,5 % և 21.1 % գործազրկություն՝ համապատասխանաբար 15-24 և 25-34 տարիքային խմբերի շրջանում՝ 2018 թ. դրությամբ և 32.6 % և 19.8 %՝ 2019 թ. դրությամբ[3]:

Աշխատանքի վրա հիմնված ուսումնառության ծրագրի ներդրումը Հայաստանում կնպաստի երիտասարդների շրջանում զբաղվածության բարձրացմանը: Բայց շատ կարևոր է այդ համակարգի ներդրմանը զուգահեռ իրականացնել աշխատանքի շուկայում անհրաժեշտ մասնագիտությունների պահանջարկի գնահատում, որը կօգնի ավելի լավ կառուցել կրթություն-աշխատանք կապը:

Մեծ ուշադրություն է հատկացվում նաև բարձրագույն կրթությանը: Այն ունի 4 ճյուղեր՝ պետական բուհեր, մասնավոր բուհեր, կիրառական գիտու-

---

[1] https://ams-forschungsnetzwerk.at/deutsch/qualibarometer/qualibarometer.asp?sid=155036&lng=1

[2] https://www.etf.europa.eu/sites/default/files/document/ARM_Agenda%20WBL%20workshop%2028%20November_ARM.pdf

[3] ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանում 2020 թ., «Երիտասարդներ» բաժին https://armstat.am/file/article/trud_2020_9.pdf

թյունների համալսարաններ և մանկավարժական կրթության համալսարանական քոլեջներ: 1994 թվականից ստեղծված ավստրիական կիրառական գիտությունների համալսարանները առաջարկում են գործնական ուղղվածությամբ բարձրագույն կրթություն: Համեմատած պետական համալսարանների հետ՝ կիրառական գիտությունների համալսարանները առաջարկում են տարբեր ոլորտներում ուսումնական ծրագրերի լայն շրջանակ՝ ճարտարագիտություն, տնտեսագիտություն, սոցիալական գիտություններ և առողջապահություն, բնական գիտություններ, արվեստ և դիզայն, ռազմական և ոստիկանական գիտություններ: Կիրառական գիտությունների համալսարանները սերտորեն համագործակցում են տեղական ձեռնարկությունների հետ, որոնց մեծ մասը փոքր և միջին ձեռնարկություններ են: Նրանք մշակում և իրականացնում են համատեղ գիտահետազոտական ծրագրեր՝ նպաստելով տեղական բիզնեսի նորարարական և գիտական առաջընթացին: Տարածաշրջանային ձեռնարկություններն առաջարկում են գործնական պարապմունքներ և ստաժավորում, իսկ պրոֆեսիոնալ փորձագետները մտնում են դասախոսական կազմի մեջ[1]:

Ավստրիայի կառավարությունն ընդունում է հետազոտությունը, տեխնոլոգիաներն ու ինովացիաները որպես երկրի կայուն և շարունակական զարգացման շարժիչ ուժ: Ավստրիայում հետազոտությունների և զարգացման (R&D) մասով գործունեություն հիմնականում իրականացնում են երկրի 22 պետական համալսարանները՝ իրենց 1259 հետազոտական ստորաբաժանումներով և մոտավորապես 3489 հետազոտություններով զբաղվող ձեռնարկություններով՝ հիմնականում փոքր և միջին ձեռնարկությունների, ինչպես նաև մի քանի խոշոր ընկերությունների հետ: Այն միջազգային կազմակերպությունները, որոնց գլխամասային գրասենյակը գտնվում է Ավստրիայում, զգալի ներդրում են կատարում հետազոտությունների և զարգացման գործում: Որոշիչ դեր են խաղում նաև հետազոտություններ իրականացնող ոչ համալսարանական տարբեր ինստիտուտները. դրանք են Ավստրիայի տեխնոլոգիական ինստիտուտը (AIT), այդ հետազոտական խմբերից ամենամեծը, Ավստրիայի գիտությունների ակադեմիան, որը համալսարաններից դուրս հիմնարար հետազոտությունների խոշորագույն կենտրոնն է: Միայն 2017 թ. հետազոտությունների և զարգացման վրա ծախսվել է ՀՆԱ-ի 3.17 %-ը. այս ցուցանիշով Ավստրիան Եվրոպայում երկրորդն է: Այդ ուղղության վրա աշխատում են 130 000-ից ավելի մարդ, որոնց 60 %-ից ավելին գիտաշխատողներ են: Հետազոտությունների և զարգացման ուղղությամբ ֆինանսավորման 50 %-ից ավելին կատարել են բիզնեսները, 28.4 %-ը՝ պետական հատվածը[2]:

---

[1] https://www.bmbwf.gv.at/en/Topics/Higher-education---universities/Higher-education-system/FHG.html

[2] https://www.bmbwf.gv.at/en/Topics/Research/Research-in-Austria.html

Համաշխարհային մրցունակության զեկույցի տվյալները ևս փաստում են, որ Ավստրիայում գործող զբաղվածության, կրթության քաղաքականությունները մրցունակ և զարգացած երկիր ունենալու հիմքն են (տե՛ս աղյուսակ 1):

Հայաստանի զարգացման համար Ավստրիայի վերոնշյալ փորձի հիման վրա առաջարկություններ անելուց առաջ համեմատենք նաև Ավստրիան և Հայաստանը մի քանի ցուցանիշներով:

Համաձայն Կայուն զարգացման զեկույցի՝ Ավստրիան 165 երկրների շարքում 6-րդն է, Հայաստանը՝ 58-րդը[1]: Ավստրիան առաջատարն է հատկապես կայուն զարգացման նպատակներից աղքատության վերացման և մաքուր էներգիայի ստեղծման, ուժեղ ենթակառուցվածքների մասով, իսկ Հայաստանը՝ մաքուր էներգիայի մասով: Որակյալ կրթություն, արժանապատիվ աշխատանք և տնտեսական աճ, արդյունաբերություն, ինովացիաներ և ենթակառուցվածքներ նպատակներով Ավստրիան առաջատարը դառնալու ուղու վրա է, մինչդեռ Հայաստանը դեռ բավականին լուրջ մարտահրավերներ ունի[2]:

Ավստրիան առաջատար երկրներից է նաև համաձայն Համաշխարհային մրցունակության 2019 թ. զեկույցի[3]. այն աշխարհի 141 երկրների շարքում 21-րդն է, իսկ Հայաստանը՝ 69-րդը[4]:

Հայաստանում և Ավստրիայում կիրառվող կրթության, զբաղվածության և հետազոտությունների արդյունավետությունը հասկանալու համար վերլուծություն իրականացնենք համեմատելով դրանք բնորոշող հիմնասյուները Համաշխարհային մրցունակության զեկույցում (աղյուսակ 1)՝

Աղյուսակ 1

Ավստրիայի և Հայաստանի դիրքերը ըստ 3 հիմնասյուների [5]

Մրցունակության հիմնասյուներ	*Ավստրիա*		*Հայաստան*	
	Ցուցանիշ	Դիրք	Ցուցանիշ	Դիրք
Հմտություններ	79.4	16	66.8	61
Աշխատաշուկա	67.2	29	66.4	32
Ինովացիոն կարողություններ	74.5	14	39.4	62

Համաձայն աղյուսակ 1-ի՝ Ավստրիան աշխարհի լավագույն 20 երկրների շարքում է ըստ Հմտություններ (16) և Ինովացիոն կարողություններ (14) հիմ-

[1] https://dashboards.sdgindex.org/profiles/armenia (last accessed August 12, 2021)

[2] https://dashboards.sdgindex.org/profiles/austria (last accessed August 12, 2021)

[3] Համաշխարհային մրցունակության 2020 թ. ինդեքսի հաշվարկները չեն կատարվել COVID-19 համավարակի և երկրների առջև դրա արդյունքում ծառացած մարտահրավերների պատճառով:

[4] World Economic Forum, Klaus Schwab, Global Competitiveness Report 2019, p. 62-65, 70-73, available at http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf

[5] Տե՛ս նույն տեղում:

նայուների և 29-րդն է Աշխատաշուկա հիմնայունով: Համապատասխանաբար Հայաստանը գտնվում է 61-րդ, 62-րդ և 32-րդ դիրքերում: Հիմնայուների դիրքը որոշվում է յուրաքանչյուր հիմնայան ցուցիչներով: Հասկանալու համար, թե ինչու է Ավստրիան բարձր դիրք զբաղեցնում, դիտարկենք ցուցիչները: Հմտություններ հիմնայան դիրքը որոշվում է՝ ուսումնասիրելով ներկա և ապագա աշխատուժի կարողությունները: Ավստրիան 2-րդն է աշխարհում ըստ մասնագիտական կրթության որակ ցուցիչի, Հայաստանը՝ 86-րդը, շրջանավարտների հմտությունների ցուցիչով՝ Ավստրիան՝ 9-րդը, Հայաստանը՝ 100-րդը, անձնակազմի վերապատրաստում՝ Ավստրիա՝ 13, Հայաստան՝ 97, հմուտ աշխատակիցներ գտնելու հեշտություն՝Ավստրիա՝ 48, Հայաստան՝ 85: Աշխատաշուկա հիմնայունում՝ համագործակցություն աշխատակից-գործատու հարաբերություններում՝ Ավստրիա՝ 10, Հայաստան՝ 35, աշխատաշուկայի զարգացման քաղաքականություն՝Ավստրիա՝ 2, Հայաստան՝ 76, աշխատողների իրավունքներ[1]՝ 2018 թ. Ավստրիա՝ 1, Հայաստան՝ հասանելի չէ: Ինովացիոն կարողություններ հիմնայունում՝

- գյուտերի մասով միջազգային համագործակցություն (միլիոն բնակչի հաշվով)- Ավստրիան 3-րդն է 36.15 միավորով, իսկ Հայաստանը՝ 52-րդը 0.79 միավորով,
- գիտական հրապարակումներ (միավոր) – Ավստրիան 17-րդն է, Հայաստանը՝ 71-րդը,
- պատենտների գրանցման դիմումներ (միլիոն բնակչի հաշվով) – Ավստրիան 8-րդն է, Հայաստանը՝ 53-րդը,
- R&D-ի վրա կատարվող ծախսեր (ՀՆԱ-ի %)- Ավստրիան 7-րդն է, Հայաստանը՝ 89-րդը: 2019 թ. Ավստրիայի ՀՆԱ-ի 3.1 %-ը կազմել են R&D վրա կատարվող ծախսումները, իսկ Հայաստանում այն ընդամենը 0.2 %-ն է,
- հետազոտական ինստիտուտների ճանաչվածություն (0-100) – Ավստրիա՝ 32, Հայաստան՝ 84,
- ապրանքային նշանների գրանցման դիմումներ (միլիոն բնակչի հաշվով) – Ավստրիա՝ 5, Հայաստան՝ 55[2]:

2019-ին Ավստրիայի գիտական հրապարակումների թիվը 31 573 է, Հայաստանինը՝ 1730[3]: Ըստ Համաշխարհային մտավոր սեփականության 2020 թ. ցուցանիշի՝ 2019 թ. ընթացքում Ավստրիան ստացել է 2240 գրանցման դիմում, իսկ Հայաստանը՝ 113[4]:

Այս ցուցանիշները ևս մեկ անգամ ապացուցում են, որ Ավստրիայի զարգացման ու աճի գրավականը լավ կրթության, գիտության և արդյունավետ

---

[1] World Economic Forum, Klaus Schwab, Global Competitiveness report 2018, (published October 16, 2018), p. 81, available at http://www3.weforum.org/docs/GCR2018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2018.pdf

[2] Տե՛ս N 29:

[3] https://www.scimagojr.com/countryrank.php?year=2019

[4] https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_941_2020.pdf

զբաղվածության քաղաքականության մեջ է, որոնք նաև մարդակենտրոն են, միտված են ստեղծելու հավասար հնարավորություններ բոլորի համար: Այդ ցուցանիշները փաստ են, որ Հայաստանում կրթությունը, գիտությունը բավարար չափով ուշադրության չեն արժանանում:

Գիտական նորույթը: Վերլուծելով Ավստրիայի տնտեսական զարգացման խնդիրների լուծման հիմնական գործոնները և համադրելով դրանք Հայաստանի խնդիրների հետ՝ հանգում ենք այն եզրակացության, որ այդ խնդիրների լուծումների կիրառությունը թույլ կտա. ա) լուծել կրթության ոլորտի խնդիրները, որը կնպաստի ժամանակակից պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստմանը, բ) մշակել զբաղվածության այնպիսի քաղաքականություն, որը կբերի երիտասարդների շրջանում զբաղվածության աճին:

Կիրառման հնարավորությունները: Հոդվածում հատկապես դիտարկման առարկա են դարձել Ավստրիայի տնտեսական վերելքի իրականացման հիմնական գործոնները՝ կրթության և զբաղվածության համակարգերը: Ուսումնասիրելով՝ առանձնացրել ենք քաղաքականությունների այն գործիքները, որոնք կարող են տեղայնացվել Հայաստանում՝ հաշվի առնելով տնտեսության յուրահատկությունները: Ըստ այդմ՝ հետևյալ առաջարկությունների իրականացումը կնպաստի Հայաստանում տնտեսական աճին՝

1. *2019 թվականից Հայաստանում արդեն իսկ որոշ չափով ներդրվող աշկերտության ծրագիրը զուգակցել նաև աշխատանքային միասնական համաձայնագրերով, որոնք կկնքվեն գործատուի, ոլորտային ուղղվածության հասարակական կազմակերպության, արհմիության և կրթական հաստատության միջև: Այդ համաձայնագրերով կկարգավորվեն թե՛ աշխատաժամերը, թե՛ վարձատրության չափը, թե՛ ուսումնառության ժամանակ ստացվելիք արդյունքները:*

2. Ավելացնել գիտության, հետազոտությունների և զարգացման ուղղվածությամբ պետական և մասնավոր ֆինանսավորում, ժամանակի պահանջներին համապատասխանող աշխատակիցներ ունենալու համար իրականացնել մասնագիտական պահանջարկի վերլուծություն՝ բացահայտելու և՛ ապագայի մասնագիտությունները, և՛ մշակելու համապատասխան կրթական ծրագրեր, ըստ որի էլ կհատկացվեն պետպատվերով ուսումնառության տեղերը:

Եզրակացություններ: Հոդվածի շրջանակներում ներկայացնելով Ավստրիայի տնտեսական վերելքի իրականացման պատմությունը և հաջորդող տարիներին զարգացմանն ուղղված քայլերը՝ կարող ենք փաստել, որ երկրի զարգացման հիմքը կայացած կրթական և զբաղվածության համակարգերն են: Ավստրիան վերջին տասնամյակների իր պատմության ընթացքում շատ է կարևորել և շարունակում է կարևորել բնակչության զբաղվածության ապահովման հարցը, միշտ ուշադրության կենտրոնում է եղել կրթությունը, կա-

ընորվել և շարունակում է կարևորել որակյալ, կրթված և ժամանակի պահանջներին համապատասխանող աշխատուժի առկայությունը: Ավստրիան սոցիալական երկիր է, որում կարևոր արժեքը մարդն է:

Իրականացված հետազոտությունը ցույց տվեց, որ Հայաստանում կարիք կա մշակելու և իրականացնելու մասնագիտական կրթության և աշխատանքի վրա հիմնված ուսումնառություն ծրագիր, բազմակողմանի ուսումնասիրելու աշխատաշուկայի պահանջները՝ ուսումնասիրության գործընթացում ներառելով միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները, գործատուներին, որպեսզի կարողանանք դիմակայել ժամանակակից աշխարհի արագ փոփոխությունների:

Օգտագործված գրականության ցանկ

1. 2020 թ. կնքված Միասնական համաձայնագիր՝ https://www.wko.at/service/kollektivvertrag/information-technology-collective-agreement-2020.pdf
2. Ավստրիայի վիճակագրական ծառայություն՝ https://www.statistik.at/web_en/statistics/Economy/national_accounts/gross_domestic_product/annual_data/index.html
3. ՀՀ ԱՎԾ, Աշխատանքի շուկան Հայաստանում 2020 թ., «Երիտասարդներ» բաժին https://armstat.am/file/article/trud_2020_9.pdf
4. Education at a Glance 2020: OECD Country Note https://www.oecd.org/berlin/publikationen/EAG2020_CN_AUT.pdf
5. Federal Ministry, Republic of Austria, Labor. Collective Agreements, Available at: https://www.bma.gv.at/en/Topics/Labour-Law/Salary,-Wages-and-Pay/Collective-Agreements.html
6. Glassner, Vera and Hofmann, Julia (2019). Chapter 2. Austria: from gradual change to an unknown future, in Müller, T.; Vandaele, K., and Waddington, J. (eds.) Collective bargaining in Europe: towards an endgame, Volume II, European Trade Union Institute, pp. 33-35 (33-54), available at: https://www.etui.org/sites/default/files/CB1-Chapitre%2B2.pdf
7. Gligorov, Vladimir. (2013). Austria: Not Exactly a Miracle, Aspen Review: Central Europe, Issue 01/2013, https://www.aspen.review/article/2017/austria%3A-not-exactly-a-miracle/
8. Hermann, Christoph and Flecker, Jörg (2012). “The Austrian model and the financial and economic crisis”, in S. Lehndorff (ed.) A triumph of failed ideas – European models of capitalism in the crisis. European Trade Union Institute, pp.132-33 (121-36). Available at: https://www.etui.org/sites/default/files/C6%2012%20A%20triumph%20of%20failed%20ideas%20WEB.pdf
9. Marhold, F., Poier, K., Aschauer, P., Kohlbacher, E., Nebauer, M., & Wewerka, L. (2011). How has Austria overcome the economic crisis? International Society for

Labour and Social Security Law. p.5. Available at: https://islssl.org/wp-content/uploads/2014/08/Austrian-National-Report.pdf
10. McNamee, Dardis. The Austrian Miracle: What's the secret of Austria's singular success, while the rest of Europe's economies founder? Foreign Policy. November 5. 2012. Available at: https://foreignpolicy.com/2012/11/05/the-austrian-miracle/
11. Pelinka, A., Stiefel, D., & Bischof, G. (Eds.). (2000). The Marshall Plan in Austria: Vol 8 (1st ed.). Routledge. pp.1-2. https://doi.org/10.4324/9781351303521
12. The Marshall Plan, New Austrian Information Vol. 58, March-April 2005. Available at: https://www.austrianinformation.org/march-april-2005/2007/2/14/915243.html
13. The Economy Since 1950, ADVANTAGE AUSTRIA Copenhagen, available at: https://www.advantageaustria.org/dk/zentral/business-guide/zahlen-und-fakten/wirtschaft/wirtschaft-seit-1950/wirtschaft-seit-1950.en.html
14. World Economic Forum, Klaus Schwab, Global Competitiveness report 2018, (published October 16, 2018), p. 81, available at http://www3.weforum.org/docs/GCR2018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2018.pdf
15. World Economic Forum, Klaus Schwab, Global Competitiveness Report 2019, p. 62-65, 70-73, available at http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf
16. https://worldpopulationreview.com/countries/austria-population
17. https://www.austria.org/overview
18. https://www.austria.org/economy
19. https://www.austrianinformation.org/march-april-2005/2007/2/14/915243.html
20. https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.NE.ZS?locations=AT
21. https://ams-forschungsnetzwerk.at/deutsch/qualibarometer/qualibarometer.asp?sid=155036&lng=1
22. https://www.etf.europa.eu/sites/default/files/document/ARM_Agenda%20WBL%20workshop%2028%20November_ARM.pdf
23. https://www.bmbwf.gv.at/en/Topics/Higher-education---universities/Higher-education-system/FHG.html
24. https://www.bmbwf.gv.at/en/Topics/Research/Research-in-Austria.html
25. https://dashboards.sdgindex.org/profiles/armenia
26. https://dashboards.sdgindex.org/profiles/austria
27. https://www.scimagojr.com/countryrank.php?year=2019
28. https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_941_2020.pdf

References

1. Avstriayi vitwakagrakan c'ar'ayowt'yown` https://www.statistik.at/web_en/nomenu/searchresults/index.html
2. 2020t'.-in knqvac' Miasnakan hamad'aynagir `

https://www.wko.at/service/kollektivvertrag/information-technology-collective-agreement-2020.pdf
3. HH AVC', Ashxatanqi showkan Hayastanowm 2020t', «Eritasardner» bajhin https://armstat.am/file/article/trud_2020_9.pdf
4. Education at a Glance 2020: OECD Country Note https://www.oecd.org/berlin/publikationen/EAG2020_CN_AUT.pdf
5. Federal Ministry, Republic of Austria, Labor. Collective Agreements, Available at: https://www.bma.gv.at/en/Topics/Labour-Law/Salary,-Wages-and-Pay/Collective-Agreements.html
6. Glassner, Vera and Hofmann, Julia (2019). Chapter 2. Austria: from gradual change to an unknown future, in Müller, T.; Vandaele, K., and Waddington, J. (eds.) Collective bargaining in Europe: towards an endgame, Volume II, European Trade Union Institute, pp. 33-35 (33-54), available at: https://www.etui.org/sites/default/files/CB1-Chapitre%2B2.pdf
7. Gligorov, Vladimir. (2013). Austria: Not Exactly a Miracle, Aspen Review: Central Europe, Issue 01/2013, https://www.aspen.review/article/2017/austria%3A-not-exactly-a-miracle/
8. Hermann, Christoph and Flecker, Jörg (2012). "The Austrian model and the financial and economic crisis", in S. Lehndorff (ed.) A triumph of failed ideas – European models of capitalism in the crisis. European Trade Union Institute, pp. 132-33 (121-36). Available at: https://www.etui.org/sites/default/files/C6%2012%20A%20triumph%20of%20failed%20ideas%20WEB.pdf
9. Marhold, F., Poier, K., Aschauer, P., Kohlbacher, E., Nebauer, M., & Wewerka, L. (2011). How has Austria overcome the economic crisis? International Society for Labour and Social Security Law. p.5. Available at: https://islssl.org/wp-content/uploads/2014/08/Austrian-National-Report.pdf
10. McNamee, Dardis. The Austrian Miracle: What's the secret of Austria's singular success, while the rest of Europe's economies founder? Foreign Policy. November 5. 2012. Available at: https://foreignpolicy.com/2012/11/05/the-austrian-miracle/
11. Pelinka, A., Stiefel, D., & Bischof, G. (Eds.). (2000). The Marshall Plan in Austria: Vol 8 (1st ed.). Routledge. pp.1-2. https://doi.org/10.4324/9781351303521
12. The Marshall Plan, New Austrian Information Vol. 58, March-April 2005. Available at: https://www.austrianinformation.org/march-april-2005/2007/2/14/915243.html
13. The Economy Since 1950, ADVANTAGE AUSTRIA Copenhagen, available at: https://www.advantageaustria.org/dk/zentral/business-guide/zahlen-und-fakten/wirtschaft/wirtschaft-seit-1950/wirtschaft-seit-1950.en.html
14. World Economic Forum, Klaus Schwab, Global Competitiveness report 2018, (published October 16, 2018), p. 81, available at http://www3.weforum.org/docs/GCR2018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2018.pdf

15. World Economic Forum, Klaus Schwab, Global Competitiveness Report 2019, p. 62-65, 70-73, available at http://www3.weforum.org/docs/WEF_TheGlobalCompetitivenessReport2019.pdf
16. https://worldpopulationreview.com/countries/austria-population
17. https://www.austria.org/overview
18. https://www.austria.org/economy
19. https://www.austrianinformation.org/march-april-2005/2007/2/14/915243.html
20. https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.NE.ZS?locations=AT
21. https://ams-forschungsnetzwerk.at/deutsch/qualibarometer/qualibarometer.asp?sid=155036&lng=1
22. https://www.etf.europa.eu/sites/default/files/document/ARM_Agenda%20WBL%20workshop%2028%20November_ARM.pdf
23. https://www.bmbwf.gv.at/en/Topics/Higher-education---universities/Higher-education-system/FHG.html
24. https://www.bmbwf.gv.at/en/Topics/Research/Research-in-Austria.html
25. https://dashboards.sdgindex.org/profiles/armenia
26. https://dashboards.sdgindex.org/profiles/austria
27. https://www.scimagojr.com/countryrank.php?year=2019
28. https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_941_2020.pdf

ԱՎՍՏՐԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

ՄԱՐԻԱՄ ՊՈՂՈՍՅԱՆ

Համառոտագիր: Ավստրիան Եվրոպայի և աշխարհի զարգացած երկրներից մեկն է, Եվրոպայի տարբեր շրջանների միջև կենսական տարանցիկ կենտրոն է և 20-րդ դարի համաշխարհային պատերազմներից հետո կարողացել է ապահովել վերելքի բարձր ցուցանիշներ:

Հոդվածի արդիականությունը: Նախորդ դարի 2 համաշխարհային պատերազմներից, մասնավորապես՝ Երկրորդ համաշխարհայինի ավարտից հետո ավերված և օկուպացված Ավստրիան ներկայումս աշխարհի ամենահարուստ երկրներից մեկն է: Զուգահեռներ անցկացնելով ներկայիս Հայաստանի հետ, որը ևս գտնվում է ոչ միայն հետպատերազմյան, այլև համավարակային շրջանում, արդիական է դառնում նմանատիպ ճգնաժամերից դուրս եկած և հզորացած պետությունների փորձի ուսումնասիրությունը:

Ուստի ***հոդվածի նպատակն է՝*** Ավստրիան որպես էտալոն դիտարկելով՝ առաջարկել Հայաստանի համար ճգնաժամից դուրս գալու ուղիներ և լուծումներ:

Այդ նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ **խնդիրները՝**

- ուսումնասիրել Ավստրիայի տնտեսական զարգացմանը ուղին,
- բացահայտել կիրառված և ներկայումս էլ կիրառվող մեթոդները,
- վերլուծել Ավստրիայի և Հայաստանի դիրքերը ըստ մի շարք համաշխար-

հային ցուցանիշների:

Ուսումնասիրության հիմնական արդյունքների վերաբերյալ եզրահանգումներ կատարելիս կիրառվել են տրամաբանական մտահանգման և համեմատական վերլուծության մեթոդները:

Գիտական նորույթը: Վերլուծելով Ավստրիայի տնտեսական զարգացման խնդիրների լուծման հիմնական գործոնները և համադրելով դրանք Հայաստանի խնդիրների հետ՝ հանգում ենք այն եզրակացության, որ այդ խնդիրների լուծումների կիրառությունը թույլ կտա. ա) լուծել կրթության ոլորտի խնդիրները, որը կնպաստի ժամանակակից պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստմանը, բ) մշակել զբաղվածության այնպիսի քաղաքականություն, որը կբերի երիտասարդների շրջանում զբաղվածության աճին:

Կիրառման հնարավորությունները: Հոդվածում հատկապես դիտարկման առարկա են դարձել Ավստրիայի տնտեսական վերելքի իրականացման հիմնական գործոնները՝ կրթության և զբաղվածության համակարգերը: Ուսումնասիրելով՝ առանձնացրել ենք քաղաքականությունների այն գործիքները, որոնք կարող են տեղայնացվել Հայաստանում՝ հաշվի առնելով տնտեսության յուրահատկությունները: Ըստ այդմ հետևյալ առաջարկությունների իրականացումը կնպաստի Հայաստանում տնտեսական աճին.

1. 2019 թվականից Հայաստանում արդեն իսկ որոշ չափով ներդրվող աշկերտության ծրագիրը զուգակցել նաև աշխատանքային միասնական համաձայնագրերով, որոնք կկնքվեն գործատուի, ոլորտային ուղղվածության հասարակական կազմակերպության, արհմիության և կրթական հաստատության միջև: Այդ համաձայնագրերով կկարգավորվեն թե՛ աշխատաժամերը, թե՛ վարձատրության չափը, թե՛ ուսումնառության ժամանակ ստացվելիք արդյունքները:

2. Ավելացնել գիտության, հետազոտությունների և զարգացման ուղղվածությամբ պետական և մասնավոր ֆինանսավորում, ժամանակի պահանջներին համապատասխանող աշխատակիցներ ունենալու համար իրականացնել մասնագիտական պահանջարկի վերլուծություն՝ բացահայտելու և՛ ապագայի մասնագիտությունները, և՛ մշակելու համապատասխան կրթական ծրագրեր, ըստ որի էլ կհատկացվեն պետպատվերով ուսումնառության տեղերը:

Բանալի բառեր՝ տնտեսական հրաշք, զարգացում, կրթություն, զբաղվածություն, հետազոտություն և զարգացում, մրցունակություն, տնտեսություն, գիտություն, վերելքի գործոններ

ФАКТОРЫ ЭКОНОМИЧЕСКОГО ПОДЪЕМА АВСТРИИ

МАРИАМ ПОГОСЯН

Аннотация: Австрия является одной из развитых стран Европы и мира, жизненно важным транзитным центром между различными регионами Европы. Это страна, которая после 2 мировых войн 20-ого века смогла обеспечить высокие темпы роста.

Актуальность статьи. После двух мировых войн прошлого века, в частности, после окончания Второй мировой, разрушенная и оккупированная Австрия в настоящее время является одной из самых богатых стран мира. Проводя параллели с нынешней Арменией, которая находится не только в послевоенном периоде, но и в периоде пандемии COVID-19, становится актуальным изучение опыта государств, которые вышли из подобных кризисов и стали мировыми лидерами. Поэтому ***целью статьи*** является предложение путей и решений для выхода из кризиса Армении, рассматривая Австрию как эталон.

Для достижения этой цели поставлены следующие **задачи:**

- изучить путь экономического развития Австрии,
- выявить примененные и применяемые в настоящее время методы,
- проанализировать позиции Австрии и Армении по ряду мировых показателей.

Нами сделаны выводы об основных результатах исследования с помощью ***методов*** логического вывода и сравнительного анализа.

Научная новизна. Анализируя основные факторы решения проблем экономического развития Австрии и сравнивая их с проблемами Армении, мы приходим к выводу, что применение решений этих проблем позволит: а) решить проблемы в области образования, что будет способствовать подготовке специалистов в соответствии с современными требованиями; б) разработать политику занятости, которая приведет к увеличению занятости среди молодежи.

Возможности применения. В статье предметом рассмотрения стали основные факторы реализации экономического подъема Австрии-системы образования и занятости. Изучая, мы выделили те инструменты политики, которые могут быть локализованы в Армении с учетом особенностей экономики. Таким образом, реализация следующих предложений будет способствовать экономическому росту в Армении:

1. с 2019 года уже в какой-то мере внедряемую в Армении программу ученичества сочетать с едиными трудовыми соглашениями, которые будут заключены между работодателем, общественной организацией отраслевой направленности, профсоюзом и образовательным учреждением. Согласно этим соглашениям, будут урегулированы как часы работы, так и размер заработной платы, а также результаты, которые будут получены во время учебы.
2. Следуя примеру Австрии, предлагается увеличить государственное и частное финансирование науки, исследований и разработок, а для того, чтобы сотрудники соответствовали требованиям времени, провести анализ спроса на навыки, который позволит определить профессии будущего, а также будет способствовать разработке соответствующих образовательных программ, в соответствии с которыми места будут распределяться по государственному заказу.

Ключевые слова: экономическое чудо, развитие, образование, занятость, исследование и развитие, конкурентоспособность, экономика, наука, факторы подъема

THE FACTORS OF AUSTRIA'S ECONOMIC UPTURN

MARIAM POGHOSYAN

Abstract: Austria is one of the developed countries of Europe and the world, is a vital transit center between different regions of Europe. This is the country which after 2 world wars of the 20th century was able to provide high growth rates.

The relevance of the article. After two world wars of the last century, in particular, after the end of the World War II, the destroyed and occupied Austria is now one of the richest countries in the world. Drawing parallels with the current Armenia, which is not only in the post-war period but also in a period of COVID-19 pandemic, it becomes relevant to study the experience of states that have emerged from such crises and became world's leaders. **The purpose of the article** is to propose ways and solutions to overcome the crisis in Armenia, considering Austria as a benchmark.

The following objectives are set, for achieving this goal:

- to study the way of economic development of Austria,
- to identify the methods used and currently in use,
- to analyze the positions of Austria and Armenia on a number of world indicators.

We draw conclusions about the main results of the study through logical inference and comparative analysis **method**s.

***The Scientific Novelty*:** Analyzing the main factors of solving the problems of economic development in Austria and comparing them with the problems of Armenia, we come to the conclusion that the application of solutions to these problems will allow: a) to solve problems in the field of education, which will contribute to the training of specialists in accordance with modern requirements; b) to develop an employment policy that will lead to an increase in employment among young people.

Possibilities of application: The article considers the main factors of the implementation of the economic recovery of Austria-the education and employment systems. We have identified those policy instruments that can be localized in Armenia, taking into account the peculiarities of Armenian economy. Thus, the implementation of the following proposals will contribute to economic growth in Armenia:

1. It is proposed to combine the apprenticeship program, which to some extent is already being implemented in Armenia since 2019, with Collective bargaining agreements that will be concluded between the employer, a public organization of an industry orientation, a trade union and an educational institution. According to these agreements, both the hours of work and the amount of wages will be regulated, as well as the results that will be obtained during the study.

2. Following Austria´s example, it is proposed to increase public and private funding for science, research, and development, and in order to have employees meeting the time requirements, to conduct skills demand analysis which will identify the professions of the future and will also contribute to the development of appropriate educational programs, according to which places will be allocated by state order.

Keywords: economic miracle, development, education, employment, research and development, competitiveness, economy, science, factors of upturn